ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2019 թվականի թիվ 85-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածով, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջով, հիմք ընդունելով Խաշթառակ համայնքում ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության կողմից ըստ անհրաժեշտության ստուգման իրականացման արդյունքում արձանագրված խախտումների և թերությունների վերաբերյալ 2019թ. մայիսի 31-ի N9 ակտը

ո ր ո շ ու մ եմ

1. Համայնքի վարչական տարածքում «ԿՈԿ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ-ի կողմից հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Լուսաձոր համայնքի ղեկավար Վարդան Սարդարյանին նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհինգնապատիկի չափով:
2. Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով՝ ձեռնարկել միջոցներ սույն որոշման 1-ին կետում նշված խախտումները կասեցնելու ու վերացնելու համար և ընթացքի վերաբերյալ 15-օրյա պարբերականությամբ ներկայացնել տեղեկատվություն:

ՀՀ ՀՈՐԻՆՅԱՆ

18.06.2019

X

18 հունիսի 2019թ.
ք. Իջևան